ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ • ПУБЛИКАЦИИ

ՀՈՎՀ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄԻ ԱՆՏԻՊ ՀՈԴՎԱԾ

Շատ տարիներ առաջ՝ 60-ական թվականների կեսերին, բանաստեղծի ավագ դուստր Աշխեն Թումանյանը ինձ տրամադրեց 1921 թ. Թումանյանի դրած մի անտիպ հոդվածի մեքենագիր օրինակը։ Ծանոթանալով մեր ժողովրդի նորագույն պատմության ամենաբարդ շրջաններից մեկին վերաբերող այդ հոդվածի բովանդակությանը, ես, անկեղծ ասած, այն ժամանակ լուրջ փորձեր չկատարեցի այն հրապարակելու համար։ Պարզ էր, որ այն օրերին գրեթե անհնար պիտի լիներ տպագրել այդպիսի մի նյութ։ Այնինչ այսօր՝ հրապարակայնության և պատմության «փակ դռներ» վերացման պայմաններում, մեծ բանաստեղծի ժառանգության այս մոռացված էջի տպագրությունը թվում է անհրաժեշտ և անհետաձգելի գործ։ Այդ հոդվածը կարևոր արժեք ունի ինչպես բանաստեղծի կյանքի և գործունեության վերջին շրջանի լրիվ պատկերը բացահայտելու, այնպես էլ 1921 թ. սկզբին Հայաստանում տեղի ունեցած քաղաքական իրադարձությունները ճիշտ հասկանալու համար։

Թումանյանը, իհարկե, քաղաքական գործիչ և դիվանագետ չէր, բայց նա վիթխարի հեղինակություն էր վայելում նաև որպես հասարակական դեմք։ Քաղաքական հարցերում ևս նա սրրտով ու բանականությամբ արտահայտում էր հարազատ ժողովրդի ամենանվիրական ձգտումները։ Մոտ երկու տասնամյակ Թումանյանը եղել է ոչ միայն հայ գեղարվեստական, այլև հասարակական-քաղաքական կյանքի կենտրոնում, և նրա ձայնը հայ ժողովրդի ձայնն էր՝ ավելի, քան որևէ ուրիշ գործչի ձայն։ Այդ իրողությունը նորից մի առանձին ուժով հաստատվեց բանաստեղծի կյանքի վերջին տարիներին։

1920 թ. վերջին Թումանյանը չերմորեն ողջունեց Կարմիր բանակի մուտքը և խորհրդային իշխանության հաղթանակը Հայաստանում։ Նա դրա մեջ տեսավ «պատմության ուղիղ ընթացքը» և դեկտեմբերի 18-ին հարազատներին գրած նամակում ավելացրեց. «...Մեր ապագան, ինչպես միշտ ասել եմ և դուք էլ գիտեք, կապված է Ռուսաստանի հետ, իսկ Ռուսաստանն ինչքան աղատ—էնքան լավ, թե՛ մեզ համար, թե՛ աշխարհքի» (Երկերի ժողովածու, հ. 5, 1947, էջ 451)։

Նույն օրը Հայաստանի հեղկոմին ուղղած նամակում նա իր աղդային-քաղաքական հավատամքը շարադրեց այսպես.

«Ամենքից լքված ու հուսահատված հայ ժողովուրդը իր հայացքը դարձրեց դարձյալ դեպի Ռուսաստանը։ Եվ եկավ նա, նոր Ռուսաստանը։

Այժմ նոր, աղատ Ռուսաստանից է կախված ոչ միայն հայ ժողովրդին աղատել վերահաս վտանգից, այլև ապահովել նրա անկախ քաղաքական կյանքը...

Խորապես ցանկանում եմ, որ Ռուսաստանը շուտով աղատվի անցողական շրջանի դժվարություններից ու դեֆեկտներից, և ժողովուրդները նրա հետ կապվեն ոչ թե վախով, այլ սիրով» (Նույն տեղում, էջ 452—453)։

Նույն նամակում Թումանյանն իբրև կարևորագույն հարց բարձրացնում էր նոր իշխանության կողմից բնակչության տարբեր խավերի, հատկապես մտավորականության նկատմամբ մարդասիրական լայնախոհ վերաբերմունք հանդես բերելու անհրաժեշտությունը։ Նա նախազգուշացնում էր, թե ինչպիսի ողբերգական հետևանքներ կարող են առաջանալ, եթե գործերի բերումով նախկին իշխանությանը ծառայած մարդիկ ենթարկվեն հալածանքների, եթե ասպարեզ տրվի անձնական հաշիվներ մաքրելու համար լարված դավերին, «որ կարող են ծավալվել ու դառնալ համատարած չարիք։ «Հայաստանի ռևկոմը պետք է պարզի մթնոլորտը և մարդկանց հանի էդ շվար ու շփոթ դրությունից՝ ցանկացողներին հրավիրելով աղատ ծառայելու իրենց ժողովրդին»,—ավելացնում էր բանաստեղծը (էջ 454)։

Սակայն հայտնի է, որ սովետական իշխանության առաջին ամիսներին Հայաստանում չկիրառվեց այն շրջահայաց և զգույշ քաղաքականությունը, որի մասին գրում էր «ամենայն հայոց բանաստեղծը»։ Չնայած հեղկոմի նախագահ Ս. Կասյանի, ինչպես նաև Ա. Մռավյանի, Ա. Բեկզադյանի դիմադրությանը, հեղկոմի «ձախ» մեծամասնությունը (Ա. Նուրիջանյան, Գ. Աթարբեկյան, Գ. Ալիխանյան և ուրիշներ) վարում էր ռազմական կոմունիզմի և դասակարգային հակամարտությունների սրման քաղաքականություն։ Եվ այդ այն դեպքում, երբ նույ-

նիկ Ռուսաստանում ռազմական կոմունիզմի սկզբունքներն արդեն չէին համապատասխանում ժամանակի պահանջներին և 1921 թ. մարտին Ռ։(բ)Կ X համագումարում փոխարինվեցին նոր տնտեսական քաղաքականությամբ (ՆԷՊ)։ Այնինչ Հայաստանում 1921 թ. սկզբին մեծ չափեր ընդունեցին քաղաքացիների ունեցվածքի և մթերքների բռնագրավումները, մտավորականության և զինվորականների բանտարկությունն ու աքսորը։ Երկրում ստեղծվեց խուճապի և սարսափի մթնոլորտ, որից օգտվեցին դաշնակցական «փրկության կոմիտեի» պարագլուխները՝ փետրվարի 18-ին բարձրացնելով խռովություն և ժամանակավորապես նորից գրավելով իշխանությունը Երևանում և նրա մերձավոր շրջաններում (նշված հարցերի մասին նորագույն հրապարակումներից տե՛ս Կ. Սարգսյանի հոդվածը՝ «Հայաստանում ռազմական կոմունիզմի կիրառման պատմությունից», «Լրաբեր հասարակական գիտությունների», 1987, N 12, էջ 11—20)։

Թիֆլիսում գտնվող Հովհ. Թումանյանը փետրվարյան ավանտյուրան ընկալեց որպես նոր ազգային դժբախտություն, դատապարտեց նրա կազմակերպիչների անհեռատես, ազգակործան բաղաբականությունը, որը նոր աղետների էր մատնում արյունաքամ հայ ժողովրդին։ Բացի այդ, Թումանյանը լավ էր հասկանում, որ Երևանյան խռովությունը կարող էր միայն խանգարել Մոսկվայում սկսված սովետա-թուրքական բանակցությունների ժամանակ Հայաստանի քիչ թե շատ արդարացի սահմանների համար պայքարելու գործին։ Ահա թե ինչու բանաստեղծը նորից թողեց իր գրասեղանը և, ինչպես առաջ էլ եղել էր շատ անգամ, իր ժողովրդին փորձությունից փրկելու նպատակով, նետվեց քաղաքական դեպքերի հորձանուտը։ 1921 թ. փետրվարի 25-ին սովետական կարգերը հաղթեցին նաև Վրաստանում, և Թումանյանի խաղաղասիրական ջանքերն ստացան կուսակցական և պետական գործիչների, առաջին հերթին՝ հայ ժողովրդի անկեղծ բարեկամ Գ. Կ. Օրջոնիկիձեի աջակցությունը։ Վերջինիս առաջարկով էլ նա մարտի կեսերին Թիֆլիսից ուղևորվեց Երևան մի հիմնական նպատակով՝ համոզել խռովության ղեկավարներին դադարեցնել զինված գիմադրությունը և հայ ժողովրդին փրկել նոր արյունահեղությունից։

Դժբախտաբար, «Հայրենիքի փրկության կոմիտեն» չուզեց ունկնդրել ազգային բանաստեղծի ձայնին և շարունակեց զինված դիմադրությունը, մինչև որ ապրիլի 2-ին Կարմիր բանակի հարվածների տակ ստիպված եղավ փախչել Երևանից։ Իսկ մինչև այդ՝ Թումանյանը Երևանում գտնվում էր տնային կալանքի մեջ, զրկված էր արտաքին աշխարհի հետ շփվելու հնարավորությունից։

Խռովության վերացումից հետո Թումանյանը Երևանում մնաց ևս շուրջ կես ամիս, որից հետո Դիլիջանի և Ղարաքիլիսայի վրայով վերադարձավ Թիֆլիս։

Հրապարակվող հոդվածում բանաստեղծը ցանկացել է հանրագումարի բերել իր մտորումները վերջին ամիսների իրադարձությունների, նրանց պատճառների ու հետևանքների մասին։ Այստեղ երևում է Թումանյանի քաղաքացիական նկարագրի ամբողջ վեհությունը, շիտակությունն ու հետևողականությունը։ Երևում են նրա բոլոր մտքերի և գործերի մարդասիրական մղումները, նրա հաստատակամ կողմնորոշումը դեպի խորհրդային իշխանությունն ու դեպի նոր Ռուսաստանը, որոնց մեջ նա տեսնում էր հայ ժողովրդի փրկության միակ խարիսխը։ Միաժամանակ դեպքերի համառոտ վերլուծությամբ ցույց են տրվում նաև այն սխալները, հատկապես Հայաստանի դժվարին պայմաններում ռազմական կոմունիզմի կոպիտ կիրառման փորձերը, որոնք հող ստեղծեցին դժգոհության և խուճապի համար։ Այդ առումով՝ Թումանյանի հոդվածն ունի նաև առաջնահերթ պատմագիտական նշանակություն՝ որպես ազգային մեծ բանաստեղծի վկայություն հարազատ ժողովրդի կյանքի այս շատ բարդ և հակասական ժամանակաշրջանի մասին։

Հայաստանի բազմաշարչար հողում խաղաղություն և արդարություն հաստատելու համար Թումանյանի կատարած առաջարկները, լինելով նրա հումանիստական աշխարհայացքի ուղղակի արտահայտությունը, միաժամանակ իրենց ոգով ըստ ամենայնի համապատասխանում էին այն քաղաքականությանը, որ հենց այդ ժամանակ՝ 1921 թ. գարնանը մշակվեց և սկսեց իրագործվել կուսակցության կողմից։ 1921 թ. ապրիլի 14-ին Վ. Ի. Լենինը գրեց իր հայտնի նամակը Կովկասի կոմունիստներին, որի մեջ հատուկ ընդգծում էր տեղական պայմանների յուրահատկությունը հաշվի առնելու, ոչ պրոլետարական խավերի նկատմամբ զգույշ և շրջահայաց վերաբերմունք հանդես բերելու անհրաժեշտությունը։ Ահա մի քանի հատված այդ նամակի տարբեր մասերից.

«...Ամենից ավելի կարևոր է, որ Անդրկովկասի կոմունիստները հասկանան իրենց դրության, իրենց հանրապետությունների դրության յուրահատկությունը, ի տարբերություն ՌՍՖՍՀ-ի դրության ու պայմանների, հասկանան մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ

մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը։

<...> Ավելի մեղմություն, զգուշություն, զիջողականություն մանր բուրժուազիայի, ինտելիգենցիայի և մանավանդ գյուղացիության նկատմամբ։

<...> Ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ,— ահա թե ինչն է հնարավոր ու անհրաժեշտ Կովկասի հանրապետությունների համար՝ ի տարբերություն ՌՍՖՍՀ-ի։ Ահա թե ինչն է հարկավոր հասկանալ ու կարողանալ իրականացնել, ի տարբերություն մեր տակտիկայի։

<...> Զընդօրինակել նույնությամբ մեր տակտիկան, այլ ինքնուրույն կշռադատել նրա յուրահատկության պատճառները. նրա պայմաններն ու արդյունքները, ձեզ մոտ կիրառել 1917—1921 թվականների փորձի ոչ թե տառը, այլ ոգին, իմաստը, դասերը» (Վ. Ի. Լենին. Երկերի լիակատար ժողովածու. հ. 43, 1982, էջ 237—239)։

Վ. Ի. Լենինի այդ նամակը Կովկաս բերեց Ալ. Մյասնիկյանը, որը շուտով ժամանեց Հայաստան և դարձավ հանրապետության ժողկոմխորհի նախագահ։ Երևանում մայիսի սկզբին կուսակցական և արհմիութենական ակտիվի միացյալ ժողովում կարդացած իր առաջին իսկ զեկուցման մեջ Մյասնիկյանը լենինյան նամակի ոգով նորից հատուկ ընդգծեց տեղական պայմանների յուրահատկությունը հաշվի առնելու և ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականության անցնելու անհրաժեշտությունը։ Բերենք մի քանի նախադասություն այդ զեկուցումից.

«Մենք մարքսիստներ ենք և ասում ենք. ուրիշ են պայմանները, ուրիշ պիտի լինեն և միջոցները։

<...> Հարկավոր չէ, որ հայ աշխատավորությունն անպատճառ տեսնի քաղաքացիական կռվի այն բոլոր սարսափները, ինչ որ վիճակվեց ռուս մուժիկին։

<...> Մենք եկել ենք այստեղ ո՞չ թե քաղաքացիական կռիվ անելու, չարչարելու, այլ աշխատավորությանը տանելու դեպի խաղաղ, հանգիստ աշխատանք՝ առանց շահագործման, առանց կռվի, դեպի կոմունիզմ» (Ալ. Մյասնիկյան. Ընտիր երկեր. 1957, էջ 334—336)։

Վ. Ի. Լենինի նամակն առաջին անգամ տպագրվել է Թիֆլիսի «Պրավդա Գրուզիի» թերթում, 1921 թ. մայիսի 8-ին, իսկ Ա. Ֆ. Մյասնիկյանի զեկուցումը՝ Երևանի «Կոմունիստ» թերթում, 1921 թ. մայիսի 10—11-ին։ Արդյոք այդ նյութերը նկատի չունե՞ր Հովհ. Թումանյանը, երբ իր հոդվածի վերջում խոսում էր «մեծ ուսուցչի՝ Լենինի մեծ, շիտակ համարձակության» և նրա հայ աշակերտների մասին, «որոնք անկեղծ աշխատում են գտնել ու վերացնել էդ դժբախտ պատճառները» և «հանդիսանում են մի-մի կամուրջ կոմունիզմի մեծ գաղափարի և լիքն աշխարհքում ղրկված մարդու միջև»։ Եթե ճիշտ է այս ենթադրությունը, ապա Թումանյանի սույն հոդվածը պետք է գրված լինի Թիֆլիսում, 1921 թ. մայիսի 10-ից հետո (թեև բացառված չի նաև, որ հոդվածի գրությունը սկսված լինի ավելի վաղ՝ Երևանում գտնված ժամանակ)։

Ինչպես 1921 թ. գարնան դրամատիկ դեպքերի ժամանակ, այնպես էլ իր կյանքի հետագա ընթացքում, որը դաժան ճակատագրի տնօրինությամբ եղավ շատ կարճատև, Թումանյանն ամենից ավելի մտածում էր ազգային հաշտության և միավորման, քաղաքական և անտեսական վերածնության, նոր և հզոր հայրենիքի մասին։ Դրանով էին թելադրված այն մարդասիրական հորդորները, որոնցով նա հրապարակվող հոդվածի վերջում դիմում է քաղաքական ասպարեզում գործող և ժողովրդի ճակատագրի համար պատասխանատվություն կրող մարդկանց։ Ազգային ջլատված ուժերի համախմբման բարձր նպատակն էր դարձյալ, որ դրանից մի քանի ամիս անց՝ 1921 թ. վերջին, Թումանյանին ստիպեց ստանձնել Հայաստանի օգնության կոմիտեի (ՀՕԿ) նախագահի պաշտոնը և ուղևորվել Կ. Պոլիս՝ տեղի հայության հետ բազմակողմանի կապեր հաստատելու համար։ Բանաստեղծի վերջին քաղաքացիական սխրանքը, որից հետո նա տուն վերադարձավ արդեն մահացու հիվանդ վիճակում...

Թումանյանի հոդվածի գրությունից անցել է մոտ յոթ տասնամյակ, և այսօր դժվար չէ նկատել, որ դեպքերի թարմ հետքերով շարադրված դատողությունների մեջ բանաստեղծը, բնականաբար, չէր կարող տալ պատմական ժամանակաշրջանի և քաղաքական հակադիր ուժերի համակողմանի բնութագիրը։ Որոշ գնահատականներ, անպայման, կրում են անձնական տպավորության անմիջական կնիքը, զերծ չեն սուբյեկտիվ ընկալման տարրերից։ Այլ կերպ էլ լինել չէր կարող։ Բայց այդ հանգամանքը որևէ չափով չի արժեքազրկում հրապարակվող հոդվածը։ Վստահ ենք, որ այն իր որոշակի տեղը կգրավի 1920—21 թվականների Հայաստանի պատմության սկզբնաղբյուրների շարքում, կօգնի ստեղծելու այդ շրջանի իրադարձությունների ամբողջական պատկերը՝ առանց կնճռոտ հարցերի շրջանցման։

Հոդվածը հրապարակվում է ինքնագրի հիման վրա, որը պահվում է Թումանյանի թանգարանում։ Գրված է կապույտ թանաքով, 16 նեղ փոքրագիր թերթերի երկու երեսի վրա (ընդամենը 32 էջ)։ Ձեռագրում կան թանաքով և մատիտով ջնջված առանձին բառեր և արտահայտություններ, որոնք չեն մտել սույն հրապարակման տեքստի մեջ։ Ջնջված բառերը, վերցված ուղղանկյուն փակագծերի մեջ, պահպանվել են միայն մի երկու դեպքում, երբ առանց այդ բառերի խախտվում է տվյալ նախադասության իմաստն ու տրրողչականությունը։ Ծանոթագրությունների մեջ բերվում են մի քանի կարևոր փաստաթղթեր, որոնք լապես լրացնում են 1921 թ. փետրվար-ապրիլ ամիսներին Թումանյանի ծավալած հասարակական գործունեության պատկերը։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Է.Դ. Մ. ՋԲՐԱՇՅԱՆ

<Իմ Երևան գալու առիթով...>

Իմ Երևան գալու առիթով զանազան շրջաններում զանազան բաներ հնարեցին ու ասին, բացի էն, որ պետք է իմանային ու ասեին։ Եվ այժմ ստիպված եմ ասելու թե ինչու էս ժամանակին ես Երևան եկա, ենթարկվելով ոչ միայն շատ դժվարությունների, այլև շատ վտանգների[1], և մի կարճ հաշիվ տալ թե ինչի՞ հանդիպեցի։

Փետրվարի 18-ի հեղաշրջումով մեր ժողովուրդը և մեր ինտելիգենցիան ակներև ընկել էր մի փորձանքի մեջ։ Պետք էր նրան էդ փորձանքից աղատելու փորձ անել։

Թիֆլիզի հայությունը տակնուվրա էր լինում, պարզ տեսնելով մոտալուտ վտանգը։ Սկզրում չէին հավատում. իսկ երբ հավատացին, համարում էին մի դժբախտ ավանտյուրա և գիտակ շրջաններում բացատրում էին դրսի դավադրությունով։

Ես էս մտքով մի նամակ զետեղեցի տեղական մամուլի մեջ[2], որը ես տակավին ետ չեմ վերցնում, թեև նրանից հետո շատ բան է պարզվել ինձ համար։ Բայց էդ պարզած հանգամանքներն ավելացել են իմ գիտեցածին, ոչ թե հերքել։

Մի խոսքով՝ ինչ էլ որ եղած լիներ պատճառը՝ պետք էր միջամտել խաղաղ լիկվիդացիայի ենթարկել սկսված խռովությունը։

Առաջ եկավ Երևան պատգամավորություն ուղարկելու խնդիրը։ Պատգամավորությունը անկարելի եղավ։ Կարելի եղավ միայն իմ գալը։

Ես եկա։ Եվ իմ կարծիքն ու վերաբերմունքը շատ էին պարզ բոլոր ինձ գիտեցողների համար—իհարկե հայ ժողովրդի։

Ես հենց իբրև հայ ժողովրդի բանաստեղծը—էսպես էի վճռել ինձ համար խնդիրը։

Մենք ունեինք անկախ հանրապետություն իր զորքով ու ամեն սարք ու կարգով։ Եվ չկարողացանք պահել ու պաշտպանել մեր երկիրն ու մեր ժողովուրդը։ Ապիկար եղանք ըստ ամենայնի։ Եվ պետք է խոստովանենք աշխարհքի առաջ։ Եվ իսկի չենք էլ կարող թաքցնել։

Երբ որ մեր հույսը մեզանից կտրեց, էլ ո՞ւմ պաշտպանության վրա կարող էինք հույս դնել։

Ամենամոտիկը մնում էին մեր հարևանները։

Բայց հարևանների հետ էլ միշտ մնացինք գժտված ու թշնամի և իրար կերանք մինչև վերջը...

Էլ ո՞վ էր մնում, որի վրա հույս դնեինք։

Մնում էին մեր մեծ դաշնակիցները—Անտանտա՞ն։ Բայց Անտանտան երբեք չպաշտպանեց իր, էսպես կոչված՝ փոքր դաշնակցին։ Միմիայն Ամերիկայից, էն էլ ոչ թե կառավարությունից, այլ ժողովրդից ու բանվորությունից մենք տեսանք նյութական, հիրավի, մեծ օգնություն։ Մեծ պետություններից և ոչ մեկը չհամաձայնեց՝ վերցնելու՝ Հայաստանի մանդատը։ Նեղության մեջ ընկած ժամանակ նրանցից որին էլ դիմեց Հայաստանը—մերժեցին։

Հերիք չէր որ մերժեցին, անհավասար կռիվների ժամանակ օգնեցին Հայաստանի թշնամուն՝ հայտարարելով, թե էդպես է պահանջում իրենց շահը։ Եվ երբեմն նույնիսկ իրենց զորքն ու զենքը ուղղեցին հայ ժողովրդի դեմ...

Այնինչ ամեն կողմից բռնկած ու ծավալվող թշնամության հրդեհը սպառնում էր վերջնականապես ոչ միայն հայկական հանրապետությանը, այլև հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանը։

Ղարաբաղի լեռներում արդեն կոտորվում էր հայ ժողովուրդը, իսկ Բաքվում ու իր շրջանում դողում էր կոտորածի ուրվականի առջև։

Կամ Տաճկաստանն էր անարգել առաջ գալիս և օղակում Երևանը—կոկորդը սեղմելու։

Վտանգը էնքան էր մեծ, որ սպառնում էր և Վրաստանին։ Եվ եթե Հայաստանը ստիպված Լոռու լեռները ժամանակավորապես զիջանում էր Վրաստանին՝ ոչ միայն նրան օգնելու, այլև հայության որոշ մասի փրկությունն ուներ ի նկատի։ Էլ ո՞վ էր մնում աշխարհքում, որի վրա հայ ժողովուրդը հույս դներ, որ փրկեր նրա գոնե ֆիզիկական գոյությունը։

Մնում էր մեկը։

Մեկը, որի վրա մատնացույց էին անում նույնիսկ նրա երդվյալ թշնամիները։ Ոչ միայն մյուս պետությունների ներկայացուցիչները, այլև Անգլիայի ներկայացուցիչը էդ «բերում հայերին հանձնելով իր կառավարության պաշտոնական մերժումը, թե Անգլիան Հայաստանին օգնել չի կարող, գտնում էր, որ հայ ժողովրդի փրկությունը մնում է միայն Խորհրդային իշխանությունը։ Էս նույն խորհուրդն էր բերել հայերին և Անգլիայի հայասերների կոմիտեի ներկայացուցիչը։

Հայ ժողովուրդը հո վաղուց էր սպասում բոլշևիկին, նրան նույնացրած ռուսի հետ։

Վերջապես էդ նույն որոշմանն էր եկել Երևանում ու Թիֆլիզում և հայ տիրող կուսակցությունը—դաշնակցությունը, որը և դեկտեմբերին Երևանում տեղի տվեց Խորհրդային իշխանության առջև։

Էսպեսով մեջտեղը մնում էր միայն խորհրդային հեղափոխական Ռուսաստանը։ Հեղափոխական որ ասում եմ, սրանով ուզում եմ ասել դեռևս շատ դեֆեկտներ ունեցող Ռուսաստանը։ Հենց նա ինքն է հայտարարում, թե դեռ կոմունիստ չեմ ես, այլ պրոլետարիատի դիկտատուրան։ Ժամանակավոր մի կառավարություն, և էն էլ խիստ կառավարություն, որը իր նպատակի համար կանգ չի առնում նույնիսկ տեռորի առջև և տակավին քաղաքացիական կռիվ է մղում, կռիվներից ամենաանողոքը։

Եվ սակայն էս էսպես լինելով հանդերձ նա կոտորվող հայ ժողովրդի համար փրկություն էր բերում։

Նա ոչ միայն Կարմիր բանակի հզոր հովանավորությունն էր բերում, այլև իր էությամբ մեջտեղից վեռացնելով ազգային խտրություններն ու ազգայնական ճնշումներն ու թշնամությունները—միանգամայն ապահովում էր հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը։

Հենց թեկուզ միայն էսքանը։ Եվ իրոք։

Կարմիր բանակի Ադրբեջան մտնելով անմիջապես վերացան Ղարաբաղի կոտորածն ու Բաքվի կոտորածի սարսափը։

Իսկ Հայաստան մտնելուն պես—առաջացող տաճկական բանակը ետ դարձավ Ղարաքիլիսայի ձորից և կանգ առավ Ալեքսանդրապոլում։ Բանակցություններ էին սկսվել Ալեքսանդրապոլն էլ դատարկելու, գնում էին Մոսկվա Հայաստանի սահմանները որոշելու փետրվարի 21-ի կոնֆերանսում, և հանկարծ... պայթում է փետրվարի 18-ի հեղաշրջումը։

— Ինչո՞ւ...

— Ահա էն ինչուի պատասխանն է, որ պիտի գտնել օբյեկտիվ ու բազմակողմանի։

Ինչքան վերահասու եմ եղած, ես կարծում եմ, էստեղ մի քանի պատճառներ կան։

Հիմնական պատճառը ես համարում եմ մեկը, որ կա ամեն տեղ և ամենից առաջ հենց Ռուսաստանում։ Բաց արեք Азбука коммунизма[3] (էջ 94) և տեսեք թե ինչպես է գանգատվում Ռուսաստանի ազգաբնակության ահագին մեծամասնությունից—գյուղացիությունից ու պստլիկ սեփականատերերից,

որոնք ինչքան էլ տանջված կապիտալից ու կալվածատերերից, այսուամենայնիվ էնքան ամուր են կպած իրենց անձնականին, սեփականին, որ միանգամից շատ է դժար նրանց ընտելացնել ընդհանուր ընկերական գործի։ Որտեղից իրեն համար մի պատառ փրցնելը, միայն իր սեփական տնտեսությունը հոգալու սովորությունը էնքան ամուր է նստած նրանց մեջ, որ հենց սրանով Ռուսաստանում կոմունիզմի գործը դառնում է ամենադժար գլուխ գալու մի գործ, թեկուզ թողնենք մյուս պատճառները։

Սրանից հետո դե համեցեք մեր Ապարանի գյուղերը։ Եթե կոմունիզմի գործը ռուս գյուղացիության մեջ մի չափազանց դժար գլուխ գալու գործ է, ինչու պետք է հեշտ լինի էստեղ։ Եվ ինչու չպետք է առաջ բերի հուզմունք իրենդեմ։ Իսկ եթե նկատի առնենք, որ նրա տունը մտածն էլ իսկի կոմունիստը չի և կոմունիստական կարգը, այլ պրոլետարական դիկտատուրայի մի որևէ ներկայացուցիչը, հենց իրենց գյուղում ընտրված Հեղկոմի էս կամ էն կուլակի կարգագրությամբ, և կատարված են շատ անփույթ կերպով կազմակերպված հասարակ բռնագրավումներ։

Էլ չեմ ասում, թե նույն [աղբյուրը], որ գանգատ է անում Ռուսաստանի շատ տեղերի բանվորությունից ու նրանց անգիտակցությունից, ինչ պետք է ասի Հայաստանի բանվորությունից։

Պարզ է, որ էստեղ, Հայաստանում, ոչ միայն չափազանց դժար մի գործ է կոմունիզմի գործը, այլև չափազանց հեշտ ու բնական բռնկումը նրա դեմ, մանավանդ, երբ նրա՝ կոմունիզմի փոխարեն էլ գալիս է դիկտատուրան ու քաղաքացիական կռվի ֆրոնտը և զանազան ուրիշ պատճառներ.

1. Օտարների դավադրական միջամտությունը։

2. Օֆիցերների աքսորը Ռուսաստան։

3. Հայի լեզվի վտարումը Հայաստանի խորհրդային հիմնարկություններից։

4. Տեղի տված և կասկածի տակ գտնվող, ապա թե վտանգված ինտելիգենցիան։

Ապա թե զանազան թյուրիմացություններ ու պրովակացիաներ, որ ոչ միայն գյուղացիների, այլև ինտելիգենցիայի մեջ առաջ են բերում ու զարգացնում հուսահատի հոգեբանությունը և կատարյալ պանիկա։

Տարածված էր, թե տաճկահայության մնացորդը, որին արդեն վերադարձ չկար դեպի իր երկիրը, օրենքից դուրս է հրատարակված և նրան ոչ մի փրկություն չկա նաև խորհրդային իշխանության մեջ։ Թե կոմունիստները կացիններով ջարդում են մարդկանց առանց սեռի ու հասակի խտրության և թե դրա համար կան նույնիսկ առանձին կացնավորների բատալիոններ։ Թե գյուղերում մնացածներին հավաքում ու կրակում են եկեղեցում, ինչպես օրինակ Ախտայում և այլն, և այլն։

Իհարկե ընդհանրապես սրանց հրեշավոր ստեր լինելը—կամ վախեցած ամբոխի երևակայության արդյունք լինելը շատ պարզ էր. օրինակ՝ ես Ախտայից էի գալիս, և ինձ հավատացնում էին, թե Ախտայում եկեղեցում կրակել են ժողովրդին...

Կամ՝ ալափարսեցի մի ջահել տղա պատմում էր, թե իրենց գյուղում կոտորեցին բոլոր մնացածներին—կանանց ու երեխաներին... սակայն պատմության մեջ դուրս եկավ, որ ինքը գյուղից փախել է էն ժամանակ, երբ դեռ բոլշևիկ զորքը մտած չի եղել իրենց գյուղը... Վերջապես տարածված էր, թե Թիֆլիսի Սոլոլակի թաղից, մանավանդ Բեյբության փողոցից ոչինչ չի մնացել, և փողոցներում երեսուն հազար դիակ է թափված... Եվ ես դժար էի կարողանում հավատացնել, որ ուղղակի ոչինչ չի պատահել, որ չենք էլ [զգացել] գրեթե, թե ինչպես է գիշերով նահանջել վրացական զորքը և մտել սովետական զորքը։ Բայց ամեն հերքումի և հավաստիացումի վերաբերվում էին մեծ կասկածով և միշտ օրինակ էին բերում Երևանի բանտի կոտորածը։

Եվ գյուղերը դատարկվում էին Կարմիր բանակի առջև ու պատրաստվում փախչելու դեպի տաճիկները։ Իսկ դաշնակցական ինտելիգենցիան դատապարտելով իր 30-ամյա ճանապարհը, որ գնացել է տաճիկների դեմ, բանակ-

ցություն էր վարում տաճիկների հետ...

Էս ամենից հետո հասկանալի է դառնում էն անհասկանալի երևույթը, թե ինչու էն հայ գյուղացին, որ երեկ ամեն հարմարություն ու հրամանատարություն և օֆիցերություն ունենալով—հրացան չէր արձակում տաճիկ զորքի դեմ—թե բոլշևիկյան զորք է, էսօր անպատրաստ ու մենակ, հոժարակամ վեր էր կացել օրհասական կռվի իսկական Կարմիր բանակի դեմ։ Եվ, նույնիսկ Կարմիր բանակի վկայությամբ, ճիշտ որ կռվում էր հուսահատորեն, համոզված, որ ոչ մի ուրիշ փրկություն չկա բացի կռիվն ու կոտորելը կամ կոտորվելը։

Ահա էս մոմենտին էր, մարտի 19-ին, որ ես Կարմիր բանակի ֆրոնտից անցա Երևանի ֆրոնտը սպիտակ հաշտության դրոշակի առաջնորդությամբ[4]։

Եվ, ո՜վ զարմանք։

Հաշտության էն սպիտակ դրոշակը, որ էնքան դուր եկավ Կարմիր բանակի զինվորներին, էդ նույն սպիտակ դրոշակը մի շատ մռայլ ու ծանր տպավորություն արավ հայ գյուղացիների վրա և հայկական ֆրոնտի վրա։

— Դա ի՞նչ կնշանակի... Հաշտությո՞ւն... Բայց ի՞նչ դուրս կգա էդ հաշտությունից։ Միևնույն է, հաշտվենք էլ՝ նրանք մեզ չեն խնայելու։ Չենք հավատում...

— Չենք հավատում... նույն պատասխանը տվեց ինձ Փրկության կոմիտեն, երբ ես հայտնեցի բոլշևիկյան պատասխանատու շրջանների տրամադրությունը, թե կռիվը խաղաղ լիկվիդացիայի ենթարկելու դեպքում կհրատարակվի ընդհանուր ամնիստիա, իսկ մի 10—15 հոգի էլ, որոնց մնալը անկարելի կնկատվի, ազատ ճանապարհ կտրվի գնալու ուր կամենան։

Սրա վրա կարելի էր, իհարկե, գոնե բանակցություն սկսել, բայց էդ էլ չեղավ։

— Չենք հավատում...

Էստեղ ես չեմ ուզում էլ կրկնել իմ նամակների մեջ տեղի ռադիոների պատմությունը*, մի պատմություն, որի միտքը շատ է պարզ։ Ես նպատակ եմ ունեցել որևէ ձևով գոնե մի բանակցություն սկսվի, իսկ կառավարությունը բանակցությունների հավատը մտքից հանած ու արդեն մերժած—մտածել է արանից էլ թերևս մի քիչ օգտվել՝ համոզելու, որ ձեռք քաշեն իրենից[5]։

Իհարկե, բոլորն ապարդյուն, և ապրիլի 2-ին հանկարծական խուճապի մատնված Երևանը Փրկության կոմիտեի առաջնորդությամբ փախավ դեպի Զանգեզուր, իսկ գյուղերի ժողովուրդը—դեպի Արաքսի կամուրջը—դեպի տաճիկները։

Դեպի Զանգեզուր...

Եվ...

Դեպի տաճիկները...

Զանգեզուրը—գա արդեն Հայաստանի եզերքն է։ Եվ էնտեղ, Զանգեզուրի ձորում, դաշնակցությունը պետք է մտածի, որ արդեն Հայաստանի եզերքը հասավ։ Էլ դենը տեղ չկա։ Ես դաշնակության ինտելիգենցիայի շարքերում շատ մոտիկ ընկերներ ունեմ, որոնց հետ շատ եմ կռվել, մանավանդ էս վերջին տարիները։ Իրենք էլ գգացել են, անշուշտ, որ թշնամությունը չի խոսում իմ մեջ, այլ զայրույթը։ Էսօր էդ ձորն ընկած ընկերների ետևից, էդ ձորն ընկած հարազատ ժողովրդի ետևից ես անընդունակ եմ քար շպրտելու, ինչքան էլ նրանց հանցավոր գիտենամ, ես չեմ կարող նույնիսկ իմ առաջվան խոսքերը կրկնել։ Ընդհակառակը—ես լիքն եմ խորին ցավով ու արգահատանքով, և միմիայն մի խոսք կուզենայի ուղղել նրանց ետևից.

— Էդ ճանապարհը ձեզ Հայաստանի եզերքը հասցրեց. ե՜տ դարձեք էդ ճանապարհից... և շուտո՜վ, շուտո՜վ... դեպի նոր ճանապարհ...

Ես չգիտեմ ինչ են մտածում նրանք էնտեղ—Զանգեզուրի ձորում։

Մեծ աղետներից ու մեծ հիասթափություններից հետո բոլորն թե արդեն վրա է հասել մեծ ապաշավանքը... նրանց չեմ տեսնում։

* Ընկ. Կասյանը գտել է իմ մի նամակը Եստինին (?)—կնշանակի էդ նամակն է։

Բայց տեսնում եմ մյուս կողմը—կոմունիստներին Երևանում[6]։

Եվ մեծ հիացումով եմ տեսնում նրանց շարքերում էն լավերին, որոնք իրենցից դեպի տաճիկները խուսափող բաղմահազար գյուղացիության փախուստի համար չեն կորանում և համակված են մեծ ցավով ու զարմանքով։ Որոնք չեն բավականանում պրովակատորների բացատրությունով և որոնում են իրենց սխալը ու իրենց մեղքը էդ ամենի մեջ, որոնք անկեղծ աշխատում են գտնել ու վերացնել էդ դժբախտ պատճառները։ Որոնք իրենց մեծ ուսուցչի—Լենինի մեծ, չիտակ համարձակությունից բաժին ունեն անշուշտ, և հանդիսանում են միմի կամուրջ կոմունիզմի մեծ դաղափարի և լիքն աշխարհքում զրկված մարդու միջև։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

1 Դեպի Երևան կատարած իր ուղևորության «դժվարությունների և վտանգների» մասին Թումանյանը բավական մանրամասն պատմել է հարազատներին հասցեագրած նամակում, որն ուղարկվել է Երևանից Թիֆլիս և գրվել է 1921 թ. ապրիլի 8-ին՝ արդեն խորհրդության վերացումից հետո։ «...Մի ֆրոնտից մյուսն անց կենալու ժամանակ,—գրում է Թումանյանը,—թե՛ ուրիշների և թե՛ իմ անզգուշությունից, ընկա երկու կողմից էլ հրացանային ու պուլեմյոտային կրակի տակ—երկու անգամ, երկարատև ու սաստիկ, և էսպեսով ձյունի միջով անցա մոտ տասը վերստ, մինչև դիշերվա կեսը մնացի դիրքերի առաջին»։ «Ես այժմ էլ չեմ հասկանում,—շարունակում է բանաստեղծը,—թե ինչպես աղատվեցի էն կրակի տակից ու էնքան կարմիր գընդակների տարափի միջից» (Երկերի ժողովածու. հ. 5, 1947, էջ 456—457)։

2 Խոսքը վերաբերում է 1921 թ. փետրվարյան դեպքերի առթիվ Հովհ. Թումանյանի բաց նամակին, որը բանաստեղծի երկերի առաջին գիտական հրատարակության մեջ (հ. 4, 1951, էջ 430—431) և նրա երկերի քառահատորյակում (հ. 4, 1969, էջ 309—310) զետեղվել է <Հովհաննես Թումանյանի բողոքը դաշնակցության ավանտյուրայի դեմ> խմբագրական վերտառությամբ։ Այդ հրատարակությունների ծանոթագրություններում նշվում է, որ նամակն առաջին անգամ տպագրվել է ետմահու՝ 1923 թ. մարտին, Թիֆլիսի «Մարտակոչ» թերթում։ Այնինչ, ինչպես պարզվեց վերջերս (տե՛ս Վլադիմիր Մաղալյանի հաղորդումը, «Գրական թերթ», 7 օգոստոսի 1987 թ., № 32), Թումանյանի նամակն առաջին անգամ հրապարակվել է գրվելուց անմիջապես հետո՝ Թիֆլիսում լույս տեսնող «Կովկասյան կոմունա» պատի տպագիր լրագրի և «Կարմիր աստղ» թերթի նույն օրվա՝ 1921 թ. մարտի 4-ի համարներում։

Գրելով այդ նամակը, Թումանյանը ցանկանում էր ինչ-որ կերպ ազդել Հայաստանում ստեղծված իրադրության վրա, իսկ նման փաստաթուղթը նա, բնականաբար, չէր կարող անտիպ թողնել։ Հրապարակվող հոդվածի մեջ ես նա այդ մասին ուղղակի գրել է. «Ես էս մտքով մի նամակ զետեղեցի տեղական մամուլի մեջ...»։ Հետաքրքիր է նաև այն, որ հիշյալ թերթերում Թումանյանի նամակը տպագրվել է «Հայ ժողովրդի երգիչը՝ Խորհրդային Ռուսաստանին» ընդհանուր վերտառությամբ։ Դա, իրոք, նոր Ռուսաստանին ուղղված դիմում-խնդրանք էր՝ ճիշտ հասկանալ և կողմնորոշվել Հայաստանում ծայր առած ողբերգական դեպքերի մեջ, կանխել նրանց հետագա զարգացումը։

Նկատի ունենալով Թումանյանի բաց նամակի կարևորությունը և սերտ կապը հրապարակվող հոդվածի հետ, բերում ենք նրա ամբողջական տեքստը՝ ըստ Վ. Մաղալյանի հիշյալ հրապարակման.

«Նամակ խմբագրությանը

Սրտի խորին կսկիծով հաստատ աղբյուրից տեղեկանում ենք, որ Երևանի «հեղաշրջում» կոչված ավանտյուրան կատարողները կույր գործիք են հանդիսացել մի սոսկալի դավագրության։ Նույնիսկ հայ ժողովրդի և նրա դատի դեմ և որ հեղաշրջումը կատարվել է արյունալի ոճիրներով։ Էսպիսով մի նոր աղետ է գալիս դժբախտ հայ ժողովրդի գլխին հենց էն ժամանակ, երբ նա պետք է ազատվեր ամեն աղետից։

Խորասիրտ բողոքելով էս թշվառ դեպքի և կատարված խժդժությունների դեմ, իբրև հայ ժողովրդի բանաստեղծ, որ էսքան հավատ է տածել դեպի նոր Ռուսաստանը, խնդրում եմ Սովետական Ռուսաստանին՝ հեռացնել էդ վերջին տանջանքի բաժակը արյունաքամ հայ ժողովրդից։ Նոր վերքեր չհասցնել նրա անհամար թարմ վերքերին, մեծի մեծահոգությամբ Ա-

բանվորագյուղացիական Կարմիր բանակին հատուկ եղբայրական զգացմունքով ու ներողամտությունով մոտենալ Երևանին և հայ աշխատավոր ժողովրդին, որ անշուշտ անմեղ է ու անպարտ գրեթե իր ամբողջությամբ, բարկությունը չթափել անմեղների վրա, որովհետև մեղավորներին նա չի էլ գտնելու հնտեղ, Երևանում։

Հովհաննես Թումանյան»

3 Թումանյանը նկատի ունի հետևյալ գիրքը. *Н. Бухарин и Е. Преображенский.* Азбука коммунизма. Популярное объяснение программы российской коммунистической партии большевиков. Издательство политуправления войск Северо-Кавказского военного округа. Ростов н/Д., 1920.

Այդ գրքի 94 էջի հետևյալ տողերը Թումանյանը գրեթե բառացի թարգմանել և օգտագործել է իր հոդվածի այս պարբերության մեջ.

«Громадное большинство российского населения—это мелкие хозяйчики. Они хотя и стонали под гнетом капитала и помещиков, но так привыкли к особному, своему *собственному, личному* хозяйству, что сразу их очень трудно приучить к *общему* делу, к строительству общего, товарищеского хозяйства. Урвать кус себе, нажитый на другом, заботиться только о *своем* хозяйстве—эта привычка крепко засела у каждого мелкого хозяйчика, и от того дело строительства коммунизма в России есть дело величайшей трудности, даже если не считать других причин».

4 Ինչպես երևում է 1921 թ. ապրիլի 8-ի նամակից, ռազմաճակատն անցնելուց հետո Թումանյանը Երևան է հասել մարտի 20-ին (տե՛ս Երկերի ժողովածու. հ. 5, էջ 457)։

5 Ժամանելով դաշնակցականների կողմից գրավված Երևան, Թումանյանը, սակայն, հնարավորություն չունեցավ ցանկացած չափով կատարելու իր խաղաղասիրական առաքելությունը։ Այդ մասին նա նույն նամակում գրել է. «Անշուշտ, ավելի լավ էր լինելու, շատ ու շատ ավելի լավ—եթե իմ միսիան հաջողեր, բայց մեջտեղը հավատ չկար... և շատ զուր» (նույն տեղում)։ Բանն այն է, որ Երևանում Թումանյանը մոտ կես ամիս մնաց տնային կալանքի մեջ, որին նա ենթարկվել էր «Փրկության կոմիտեի» կողմից։ Բանաստեղծի նամակներն ու ռադիոհաղորդումներ՝ ուղարկված Թիֆլիս և ռազմաճակատ արգելվել ու տեղ չեն հասցվել։ Այդ պատճառով էլ Երևանում Թումանյանի գործունեության վերաբերյալ խեղաթյուրված պատկերացում է ստեղծվել խռովության վերացումից հետո։ Այդ մասին ուղղակի ակնարկ կա նաև հրապարակվող հոդվածի սկզբում («Իմ Երևան գալու առիթով զանազան շրջաններում զանազան բաներ հնարեցին ու ասին. բաց էն, որ պետք է իմանային ու ասեին»)։

Այս կապակցությամբ անհրաժեշտ է հիշեցնել Երևանի «Կոմունիստ» թերթի 1921 թ. ապրիլի 10-ի № 62-ում տպագրված «Մի դիպլոմատի խորտակված կարիերա» խմբագրական հոդվածը։ Կարևոր վավերաթուղթ է դա Թումանյանի գործունեության այս շատ բարդ դրվագը պարզաբանելու և ճիշտ պատկերացնելու համար թեև հոդվածի որոշ պնդումներ միակողմանի տեղեկությունների արդյունք են և կարոտ են ստուգման։ Ստորև բերում ենք այդ հոդվածն ամբողջությամբ, մանավանդ որ անցած տասնամյակներին այն երբեք չի արտատպվել և չի մտել գիտական շրջանառության մեջ։

«Մի դիպլոմատի խորտակված կարիերա

Քաղաքացիական պատերազմի ժամանակ Թիֆլիսից Երևան է եկած եղել բանաստեղծ Հ. Թումանյանը։ Նա ցանկություն է ունեցած եղել ծանոթացնելու Հայաստանի «փրկիչներին» իրանց ձեռնարկի քաղաքական անհուսալի հեռանկարների հետ և առաջարկելու նրանց կամովին վայր դնել իրանց զենքերը Հայաստանի բանվորագյուղացիական իշխանության առաջ։ Երևան հասնելուց՝ Թումանյանի դերը փոխվում է։ Նրա ստորագրությամբ բռնվում է մի ռադիո-հաղորդագրություն՝ որտեղ դիպլոմատի դեր ստանձնած բանաստեղծը պաշտպանության տակ է առնում դաշնակների ձեռնարկած «ժողովրդական» շարժումը և իր կողմից խնդիր հարուցանում Վրացյանի կառավարությունը հանգիստ թողնելու մասին։ Հայաստանի հեղկոմի կողմից Թումանյանին ուղղված ռադիոն՝ հակահեղափոխական շարժման բնույթի մասին վերջնական կարծիք կազմելուց առաջ անցնել ֆրոնտի մյուս կողմը և հավաստիանալ, թե ո՞վքեր և ո՞ւմ դեմ են կռվում կարմիր բանակում կոմունիստների ղեկավարությամբ՝ մնում է անպատասխան։

Այդ առթիվ Թումանյանի տված բացատրություններից երևում է սակայն հետևյալը։ Երևան հասնելուն պես Թումանյանը ենթարկված է եղել տնային բանտարկության։

Հայ հեղկոմի հրավերը նրան հանձնված չի եղել։ Իր անունով ստացված հաղորդագրությունը դաշնակները ուղարկել են՝ նախապես աղճատելով ու փոխելով նրա բովանդակությունը։

Հայաստանի փրկության համար ըստ երևույթին անհրաժեշտ է նկատվել խորտակել ծերունի բանաստեղծի նոր կարիերան։

Թումանյանի գործունեության գնահատականը այս խմբագրական հոդվածում, ինչպես տեսնում ենք, դգալի չափով պարուրված է խորհրդավորությամբ և հակասական է։ Այդ հանգամանքն էլ ստիպեց Թումանյանին գրիչ վերցնել՝ իր երևանյան ուղևորության մասին ամբողջ ճշմարտությունն ասելու համար։ Խմբագրական հոդվածի առաջին արձագանքը պետք է համարել մի սևագիր գրառում, որը պահվում է Թումանյանի թղթերում և մինչև այժմ մնացել է անտիպ։ Բերում ենք այդ սևագիր գրառման լրիվ տեքստը, որը պետք է գրված լինի 1921 թ. ապրիլի 10-ից անմիջապես հետո.

«Կոմունիստ» № [62]-ի մեջ մի քանի տող էր տպած իմ Երևան գալու մասին «Մի դիպլոմատի խորտակված կարիերա» վերնագրով։ Երբ սրան հավատալի—պետք է շատ դարդ անեի։ Բարեբախտաբար մի քիչ վախեցրեց ինձ...

Էս տեսակ մի շատ չափազանցրած խորհրդավորություն տվեց իմ գալուն և Հայրենիքի փրկության կոմիտեն, էնքան որ ինքն էլ վախեցավ, հասարակությունն էլ, ես էլ։

Ճշմարիտը սա է։

Երևանի հեղաշրջումը շատ ծանր տպավորություն էր արել Թիֆլիսի հայության վրա և ահավոր լուրեր էին տարածվել երկուստեք կոտորածների ու կախվածների և գնդակահարվածների մասին։

Ընդհանուր ցանկությամբ և խորհրդային իշխանության հավանությամբ ես եկա ճշմարտությունն իմանալու և եթե կարելի կլիներ միջամտելու, որ անարյուն վերջանա սկսված խռովությունը։

Ես նախօրոք խոսել էի և ունեի կոմունիստ իրավասու ընկերների և մարմինների տրամադրությունը։

Դժբախտաբար էդ տրամադրությունը ընդհանուր չգնաց փրկության կոմիտեն միմիայն մի առարկությամբ, թե՝ չենք հավատում։

Երևանում ինձ համար պարզվեցին մի քանի հանգամանքներ, որոնց մասին ես պարտք համարեցի նամակով գրել ընկեր Աթարբեկյանին՝ ֆրոնտ և նրա միջոցով ընկեր Օրջոնիկիձեին՝ Թիֆլիս։

Էդ նամակներից մի երկու-երեք կետ համառոտած փրկության կոմիտեն ռադիո ղրկեց Թիֆլիս ընկեր Օրջոնիկիձեին, առարկելով, թե մնացած կետերը չի տալու, որովհետև ռադիոն պետական է, կոմիտեն համաձայն չի մնացած կետերի հետ և կուղարկի իմ գրած նամակները։

Դժբախտաբար իմ նամակները տեղ չեն հասած, դեռ չգիտեմ թե ինչու և իհարկե հանած կետերն էլ կարող են միակողմանի ու կիսատ տպավորություն անել։

Ինչ վերաբերում է էն ռադիոյին, որ Ղամարլուի ֆրոնտից ղրկել են ինձ կոմունիստ ընկերները, էդ ռադիոյի մասին ես լսել էի կիսատ-պռատ միայն կողմնակի, իսկ ռադիոն ինձ չի հասցրած։

1921 թիվ։

Սակայն այս կարճառոտ գրառումը շուտով չի բավարարել Թումանյանին և նա որոշել է ավելի մանրամասնորեն պատմել ոչ միայն իր Երևան ժամանելու նպատակների, այլև փետրվարյան խռովության պատճառների և ապագայում նման դժբախտ իրադարձությունները կանխելու միջոցների մասին։ Արդյունքը եղավ հրապարակվող հոդվածը, որը, սակայն, նույնպես անտիպ մնաց և տպագրվում է մոտ յոթ տասնամյակ հետո։

6 Խռովության ճնշումից հետո (1921 թ. ապրիլի 2) Թումանյանը մի որոշ ժամանակ դեռ մնացել է Երևանում՝ շարունակելով եռանդագին աշխատել երկրում խաղաղություն և փոխադարձ ըմբռնում հաստատելու համար։ Նա հատկապես մեծ կարևորություն է տվել բնակչության մեջ տարածված խուճապի և անվստահության տրամադրությունները վերացնելուն։ Այդ առումով կարևոր փաստաթուղթ է 1921 թ. ապրիլի 17-ին Երևանում գրված մի դիմում, որն ուղղված է Հայաստանի հանրապետության հեղկոմին։ Դիմումի սևագրության մեջ (մաքրագիր օրինակն առայժմ չի հայտնաբերված) բանաստեղծն անդրադարձել է տաճկահայ գաղթականության վիճակին, այն «սոսկալի թյուրիմացությանը», որի համաձայն հայ ժողովրդի այդ բազմաշարչար հատվածը ոչ միայն տաճիկ կառավարության, այլև խորհրդային իշխանության կող-

մից էլ «հրատարակված է օրենքից դուրս և դատապարտված է անխուսափելի կորուստի»։ Այդ առթիվ Թումանյանը հիշեցնում է, որ «ընկերներս Աթարբեկյանին և Օրջոնիկիձեին Հայրենիքի փրկության կոմիտեի միջոցով ուղարկած իմ նամակներից մեկի մեջ (որոնք, դժբախտաբար, տեղ չեն հասած) ես առանձնապես կանգ էի առել և հատուկ ուշադրություն էի խնդրել տաճկահայ դաղթականության խնդրի վրա»։ Դիմումի վերջում ասված է. «Սրանով խնդրում եմ Հայաստանի հանրապետության ուկոմի ուշադրությունը էս ծանր թուրիմացության վրա, որ նա շտապի հերքել էս դժոխային սուտը, հատուկ հրաման արձակի տաճկահայ դաղթականության համար և առնի նրան իր առանձին հոգացողության տակ, որով արդարության մեծ դործ կլինի կատարած և մեծապես հանգստացրած տեղի ունեցած ու շարունակվող կոիվը»։

НЕИЗДАННАЯ СТАТЬЯ ОВ. ТУМАНЯНА

Академик АН АрмССР Э. М. ДЖРБАШЯН

Резюме

Впервые публикуется статья великого армянского поэта Ованеса Туманяна, написанная им весной 1921 г. в связи с поездкой в Ереван. Узнав о контрреволюционном мятеже дашнаков, Туманян пересек линию фронта гражданской войны с целью убедить мятежников сложить оружие и избавить армянский народ от новых кровавых испытаний. В публикуемой статье, написанной уже после подавления мятежа и восстановления Советской власти в Армении, Туманян излагает причины, приведшие к этим роковым событиям, предлагает меры, которые должны предотвратить повторение случившегося. Во вступительной статье и в примечаниях к публикации изложены основные факты общественной деятельности Ов. Туманяна в феврале—апреле 1921 г. Статья публикуется по автографу, хранящемуся в Музее Ованеса Туманяна в Ереване.